«ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ
"ARMENIAN WATER AND SEWERAGE" CJSC

www.armwater.am

# ՀՐԱՎԵՐ

02.12.14թ. N: ՄԿՐ1-03/2795 "Հայջրմուղկոյուղի"ՓԲԸ-ի կարիքների համար՝
Ձեր N: ________________ համակարգչային տեխնոլոգիաների և սարքավորումների ձեռքբերման

Հարգելի մասնակիցներ

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/6 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում *"Հայջրմուղկոյուղի"* ՓԲԸ-ի (այսուհետև՝ Գնորդ) կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել Գնումների աջակցման կենտրոնի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 4-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով նախատեսված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված *համակարգչային տեխնոլոգիաների և սարքավորումների ձեռքբերումը:* Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում *«ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-11/6-14/42»*:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել *ք.Երևան, Վարդանանց փակ.8, 5-րդ հարկ* հասցեով, մինչև *2014թ. դեկտեմբերի* 12-ին *ժամը՝ 15:00-ն:* Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար *Հայկ Հովհաննիսյանը*: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն *ք.Երևան, Վարդանանց փակ.8, 5-րդ հարկ* հասցեում, 2014թ. *Դեկտեմբերի 12-ին, ժամը՝ 15:00-ին:*

Գնման առարկա է հանդիսանում *"Հայջրմուղկոյուղի"* ՓԲԸ-ի կարիքների համար *համակարգչային տեխնոլոգիաների և սարքավորումների* ձեռքբերումը:

*"Հայջրմուղկոյուղի"* ՓԲԸ-ի կարիքների համար *համակարգչային տեխնոլոգիաների և սարքավորումների* (որը կազմված է 2 չափաբաժնից) տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N3 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում *(Հավելված N1)*, ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ *(Հավելված N2):* Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/6 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Մասնակիցը հայտով ներկայացնում է առաջարկված ապրանքի ծագման երկիրը իսկ համարժեք գնման առարկայի դեպքում՝ ներկայացնում է համարժեք գնման առարկայի անվանումը և ծագման երկիրը:

*"Հայջրմուղկոյուղի"* ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ hho@armwater.am: Հեռ՝ (010) 54-06-85:

Պատվիրատու՝ *"Հայջրմուղկոյուղի"* ՓԲԸ

**Ադմինիստրատիվ**
**և ֆինանսական տնօրեն** **Արմեն Մարտիրոսյան**

ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ
02509667
№ 02